ԲԵՐԿՐԱՆՔ՝ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ
(նվիրվում է Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 95-ամյակին)

ՀՏԴ 929
DOI 10.56246/18294480-2022.12-38

ՂԱՋՈՅԱՆ ՀԱՄԼԵՏ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան
էլփոստ՝ h.ghajoyan@gsu.am

Հոդվածը նվիրված է Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կողմից Գավառում պետական բուհ ստեղծելու գործընթացին, ծառացած դժվարություններին, դրանց հաղթահարման ջանքերին, հոգեկան ապրումներին: Հոդվածի հիմքը Հրանտ Հակոբյանի հեղինակած «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքն է, նրա հետ աշխատելու տարիներին ստացած տպավորությունները, հուշերը: Համալսարանի հիմնումը Հրանտ Հակոբյանի վաղեմի երազանքն էր, առաքելությունը, կյանքի գործը: 1990-ական թվականների սկզբին ստեղծվեցին իրատեսական հնարավորություններ դրա իրականացման համար: Հակոբյանը ստեղծեց ոչ թե մասնավոր, այլ պետական բուհ: Այս գործում նրան աջակցեց դուստրը՝ Գերագույն խորհրդի պատգամավոր, ապա ՀՀ ստիյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Հզոր կամքի և վճռականության շնորհիվ Հրանտ Հակոբյանն հասավ իր երազանքին: Լարված գործունեության և հոգեկան տառապանքի գինը անկրկնելի և բերկրալի օրն էր՝ 1993 թվականի մայիսի 5-ը, երբ ընդունվեց համալսարանի հիմնադրման մասին ՀՀ կառավարության որոշումը: Դա Հրանտ Խաչատուրի Հակոբյանի աստեղային ժամն էր:

Բանալի բառեր՝ *Հրանտ Հակոբյան, համալսարան, լարված գործունեություն, հոգեկան տառապանք, բերկրանք, անձնական և հասարակական շահեր, հիշողություն, հասարակական կարծիք:*

Հրանտ Խաչատուրի Հակոբյանը 2022 թվականին կդառնար 95 տարեկան, բայց, ավա՜ղ, ժամանակի անողոք հոսքն արդեն տասնմեկ երկար ու ձիգ տարիներ մեզ զրկել է նրա ֆիզիկական ընկերակցությունից և դարձրել հոգևոր գոյակիցը: Ու էլի կյանքը շարունակվում է՝ այս անգամ գործի անմահության թումանյանական տրամաբանությամբ. համալսարանը սոսկ շինություն չէ ու միայն կրթական և սոցիալական խնդիրներ չի լուծել ու չի լուծում: Այն հոգևոր հարստություն է՝ մարդասիրության, հայրենասիրության, հոգատարության, հարազատ միջավայրի ու մարդկանց նկատմամբ սիրո ու պատասխանատվության, բարոյական արժեքների հզոր որակներով, որոնց կրողն ու տարածողը հենց ինքն էր՝ Հրանտ Հակոբյանը: Եվ ահա ամեն օր ու ամեն ժամ, աշխատելիս, թե աշխատանքից դուրս նա իսկական Ուսուցչի ազնվությամբ ուղղորդում է մեզ մարդկային բարձր արժեքներով, սերնդասիրության իր տված դասերով: Նրա վաստակը մեծ է, տվածն՝ անգերագնահատելի, որն հույժ կարևոր է սերունդների միջև կապն ապահովելու և երիտասարդներին ուղղորդելու համար:

Մեր տարածաշրջանի համար իր կատարած գործով, բազմաթիվ մարդկանց, այդ թվում՝ իմ կյանքում ու ճակատագրում ունեցած իր անփոխարինելի դերով նա ընդմիշտ մնալու է հասարակության չխամրող հիշողության դաշտում. նրա կյանքն ու գործունեությունը կամոքն Աստծո պատմություն է դարձել, իսկ պատմական հիշողությունը հաճախ անհրաժեշտաբար վեր հառնելու անսպասելիությունն ու անխուսափելիությունն ունի, ուստի Հրանտ Հակոբյանի պարագայում պատմությունն ու ժամանակն են հոգացել անհատական հիշողությունը թարմացնելու և այն կոլեկտիվ հիշողության վերածելու համար կարևորել հոբելյանները: Այս առումով էլ Հրանտ Հակոբյանն առանձնահատուկ է: Սովորաբար հոբելյարը հիշվում է ծննդյան որոշակի օրվա կապակցությամբ, որի ժամանակ հիշատակվում են նրա գործերը, թողած ժառանգությունը: Հաջորդ տարին՝ 2023 թվականը, ևս հոբելյանական է. լրանում է Հրանտ Հակոբյանի և նրա դստեր՝ Հրանուշ Հակոբյանի ստեղծած բուհի՝ Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակը: Հաջորդ տարվա հոբելյանական գիտաժողովի առանցքը դարձյալ լինելու է Հրանտ Հակոբյանը, քանզի «Գավառի պետական համալսարան» երևույթը անբաժան է Հրանտ Հակոբյան անհատի կյանքից ու գործունեությունից, ուստի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ համալսարանի հետ կապված նրա մտորումներին, ապրումներին, հանդիպած դժվարություններին, դրանք հաղթահարելու ջանքերին և ձեռնարկած միջոցներին: Նպա-

տակահարմար ենք գտնում նաև անդրադառնալ դժվարությունները հաղթահարելու և իր առջև դրված նպատակն իրականացնելու կամքին ու համբերատարությանը, անձնային, մասնագիտական և կազմակերպական բարձր որակներին, հասարակական կարծիքի և անձնական պատասխանատվության բարդ փոխհարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու նրա բացառիկ ունակություններին, որոնք շատ կարևոր են և խիստ պահանջված արդի պայմաններում:

Ձեկուցման մեջ հենվելու ենք բացառապես Հրանտ Հակոբյանի հեղինակած «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գրքի, ինչպես նաև նրա հետ համատեղ աշխատած տարիներին ստացած տպավորությունների ու հիշողությունների վրա, մի խոսքով, այն արժեքների, որոնք վերաարժևորելու կարիք կա:

Հատկանշական է, որ գրքի երկրորդ գլուխն ունի խորիմաստ վերնագիր՝ «Գավառի պետական համալսարանի երկունքը»: Ըստ աշխատության՝ գաղափարի ծննդյան ժամանակահատվածը ստույգ է՝ 1968 թվականի նոյեմբեր: Նախ՝ Հրանտ Հակոբյանն ունեցել է տարածաշրջանում պոլիտեխնիկ ինստիտուտի մասնաճյուղ բացելու նպատակ, ապա՝ համալսարան հիմնելու երազանք, որի իրականացումը տևեց շուրջ քառորդ դար՝ միմյանց հաջորդող խանդավառության ու հուսախաբության, մերժման ու անհիմն խոստումներով լեցուն քսանհինգ տարիներ: Քանի որ բուհը Հակոբյանի համար դեռևս երիտասարդ տարիներից ոչ միայն կրթության ու գիտության օջախ պետք է լիներ, այլև մշակույթի, լուսավորության, մարդկային ու բարոյական բարձր արժեքների, տարածաշրջանի մարդկային ներուժի համախմբման և ուղղորդման կենտրոն, ուստի երազանքը դարձավ գաղափար, իսկ սևեռուն գաղափարները ժամանակի հոլովույթում համառորեն վերարծարծվելու հատկություն ունեն: 1990-ական թվականների սկզբին այս կապակցությամբ նա խորհրդակցում է Երևանում բնակվող, բայց ծնունդով մեր տարածաշրջանի դասախոսների, իր ընկերների ու բարեկամների հետ և նկատում, որ զարմանալիորեն «ոմանք այդ ցանկությունը համարեցին անհնարին ու անհավանական, և ոչ ոք պատրաստակամություն չցուցաբերեց զորավիգ լինելու այդ գործին»[1]: Գաղափարը դիմադրության է հանդիպում նաև ընտանիքում այն հիմնավորմամբ, «...որ արդեն վաթսուն տարին բոլո-

[1] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 35:

ռած մարդը չպետք է նման ծանր լծի տակ մտնի»[2]: Դեռևս 1960-ական թվականների սկզբից հանրապետությունում շրջանառության մեջ էր դրվել «Տարածքային անհամաչափ զարգացումը հաղթահարելու» վերաբերյալ կարգախոսը, որը մասամբ լուծվել էր արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման շնորհիվ: Հետագա հասարակական-քաղաքական, տնտեսական զարգացումներն այլ ընթացք ստացան, և հետխորհրդային առաջին տարիներին տարածքային համաչափ զարգացման կարգախոսը կորցրեց իր երբեմնի իմաստն ու արդիականությունը:

Սակայն, ոչ Հրանտ Հակոբյանի համար: Նրա պատկերացմամբ՝ «տարածք» հասկացությունն ուներ առավել լայն ու ընդգրկուն բովանդակություն, քան վարչական միավորը: Դա առաջին հերթին ծննդավայր էր, հայրենիք, պատմամշակութային տարածք, ուստի հանրապետությունում առաջիններից մեկը, եթե ոչ առաջինը, տարածքների համաչափ զարգացման հրամայականը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերից տեղափոխեց բարձրագույն կրթության և գիտության ոլորտ, որպեսզի տարածաշրջանն ունենա իր պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը: Այդ նպատակով պետական կառավարման մարմինների առջև բարձրացրեց հենց այդ խնդիրը՝ իսկ ինչու՞ տարածաշրջանում չունենալ բարձրագույն կրթական հաստատություն: Հետխորհրդային առաջին տարիներին սրընթաց հետընթաց էր արձանագրվում կենսական բոլոր ոլորտներում: Հրանտ Հակոբյանը գիտեր, որ այդ ամենի վերականգնողը դարձյալ մարդն է՝ իր որակներով, իսկ կորցնել որակյալ մարդուն, որը, ըստ նրա, հղի էր «մարդկային մտքի ամլության վտանգով», ամենասարսափելին էր: Նա կրողն էր մեծ լուսավորիչների, ռուս հեղափոխական դեմոկրատների առաջավոր հայացքների, որը որոշակիորեն արտահայտել էր իր գիտական աշխատությունների մեջ: Գործունեությունը դադարեցրած արդյունաբերական ձեռնարկությունները, ամայացած գյուղատնտեսական հողահանդակները կարելի է վերականգնել որոշակի ժամանակահատվածում, մինչդեռ ամլացած միտքը ավելի ծանր հետևանքներ է առաջացնում և վերականգնման ավելի տևական ժամանակահատված պահանջում: Հատկապես այս մտահոգությամբ Հրանտ Հակոբյանը ձեռնամուխ եղավ Գավառում համալսարան հիմնադրելու գործին: Երկար տարիներ լինելով կրթության համակարգի նվիրյալ, աշխատելով որպես դպրոցի տնօրեն, դասախոս, ամբիոնի վարիչ,

[2] Նույն տեղում:

մոտիկից շփվելով տարածաշրջանի ազգաբնակչության հետ՝ նկատել էր, որ 1960-ական թվականների սկզբից մեր տարածաշրջանը բուհերն ավարտածների քանակով բարձրագույն կրթական ծառայությունների ամենամեծ սպառողներից մեկն էր հանրապետությունում: Առաջ անցնելով՝ հավաստենք այն փաստը, որ Գավառի պետական համալսարանի հիմնադրմամբ ոչ միայն ստեղծվեց տեղում երիտասարդների համար բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն, այլև լուծվեց տարածաշրջանում աշխատատեղերը բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներով համալրելու խնդիրը, միաժամանակ Հրանտ և Հրանուշ Հակոբյանների շնորհիվ Գեղարքունիքի մարզը դարձավ բարձրագույն կրթություն արտահանողը այլ տարածաշրջաններ: Իսկ մինչ այդ անդրադառնանք 1989 թվականի վերջին և 1990-ական թվականի սկզբին հանրապետությունում կրթության ոլորտում ստեղծված իրավիճակին: Գավառում պետական համալսարան հիմնադրելու նախօրեին, ըստ Հրանտ Հակոբյանի գրքում բերված տվյալների, հանրապետությունում ստեղծվել էր 84 մասնավոր բուհ, և դեռ մայրաքաղաքում շարունակվում էր նմանատիպ բուհերի ստեղծման գործընթացը: Այս պարագայում կարծես կրթամշակութային առումով տարածքների անհամաչափ զարգացման խնդիրը շարունակում էր մնալ խիստ արդիական: Հակոբյանի մասնագիտությունը հուշում էր, որ ցանկացած գործի հաջողության, երևույթի արդյունավետության, այդ թվում՝ ճշմարիտ լինելու հիմնական չափանիշը հասարակական-պատմական պրակտիկան է: Եթե սրան էլ հավելենք, որ նա շրջահայաց, ապագան կանխազգացող, հնի ու նորի դիալեկտիկան լավ ըմբռնած, էությունը՝ երևույթի, հետևանքը՝ պատճառի, պատահականությունը անհրաժեշտության հետ չշփոթող և դրանց դիալեկտիկական փոխհարաբերությանը գիտակ անձնավորություն էր, ում բնորոշ չէր սխալի և փորձության ճանապարհով գնալու արատավոր պրակտիկան, ամեն ինչ հասկանալի կլինի: Ուստի կրթության ոլորտում մեծ վաստակ, հասարակության մեջ բարձր հեղինակություն ունեցող մարդը, սերունդներին լուսավորելու, ժողովրդին ծառայելու և իր տարածաշրջանին զարգացման հնարավորություն ընձեռելու համար, չէր կարող գնալ այդ ժամանակների համար սովորական դարձած կամ անորոշ ու անհեռանկար ճանապարհով: Նա տրամադրված էր վճռականորեն, թեև գիտեր, որ ընթանալ նոր ճանապարհով խիստ դժվար է, ավելի բարդ ու խոչընդոտներով լեցուն, քան ենթադրվում էր նախապես: Իր իսկ ձևակերպմամբ դա «ժամերի հարց չէր, դա պահանջում էր երկարատև տանջալից օրերի աշխատանք, քանի-քանի մարդու պետք էր

համոզել, բացատրել, պատճառաբանել, հիմնավորել, մի խոսքով գործի դնել համոզելու բազմապիսի ու բազմակողմանի ջանքեր»[3]:

Իսկ Հակոբյանի գիտական և պրակտիկ «զինանոցում» դրանց պակասը չկար, դեռ ավելին, ուներ մոգական ուժի հասնող խոսք, անվիճելի հեղինակություն: Նրան ողջ կյանքի ընթացքում ոչ ոք որևէ հարցի կապակցությամբ չէր մերժել, դեռ ավելին՝ ձգտում էին արժանանալ նրա ուշադրությանը և սիրահոժար կատարել հանձնարարությունները: Սա էլ իր օրինաչափ հիմքերն ուներ. ինքը անթիվ ու անհամար հարցերի կապակցությամբ անշահախնդիր օգնել էր իրեն դիմած բոլոր մարդկանց: Այն տպավորությունն եմ ստացել, որ Հակոբյանը կյանքում ունեցած իր առաքելություններից մեկը համարում էր մարդկանց նեցուկ ու հենարան լինելը, հեռվից հեռու ներքին մղումով զգում էր իր օգնության կարիքն ունեցողներին: Մինչդեռ համալսարանի հիմնադրման գործում հանդիպում է դիմադրության. «...շատերի անբարյացկամությունն ակնհայտ էր»[4]:

Հակոբյանը դյուրահավատ մարդ չէր և լավ գիտեր, որ մարդկային փոխհարաբերությունները պայմանավորված են շահերի համընկնմամբ կամ բախումով: Այլ բան է անձնական շահը, այլ բան՝ հասարակականը: Նա երբեք անձնական շահը չէր գերադասում հանրային շահերից, ճիշտ հակառակը, բայց նաև գիտեր, որ երբ համընկնում են հասարակական և անձնական շահերը, գերադասելի է հանրայինի գերակայությունը, ապա ցանկացած դժվարություն կարելի է հաղթահարել: Բուհերի շուրջ ստեղծված նոր իրադրությամբ դա զգացվեց առավել ընդգծված ձևով: Նա գրեթե չէր հուսահատվում և երբ դեպքերի բերումով հայտնվում էր լարված, ցայտնոտային իրավիճակներում, շատ արագ կողմնորոշվում էր՝ գտնելով ամենառացիոնալ լուծումը, դիմելով իր գաղափարակից բարեկամներին: Ահավասիկ իր իսկ օրինակը. «...այնուհանդերձ մխիթարականն այն էր, որ նախարար պարոն Գնունին համալսարանի բացմանը կողմ էր»[5]: Այս հույսով 1992 թվականի օգոստոսի 20-ից սկսվեց նախապատրաստական խմբերի կազմավորումը, դրան զուգահեռ նաև ապագա վարչական և դասախոսական անձնակազմի հավաքագրումն ու նախապարաստումը հայցվորների խմբի միջոցով: Այդ օրերի տպավորության ու զգացածի վերաբերյալ գրում է. «ըստ երևույթին իմ

---

[3] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 43:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

հանդեպ ունեցած իրենց հարգանքից ցույց էին տալիս, որ շատ ուրախ են, ողջունում էին նման ձեռնարկումը, բայց դեմքերի արտահայտությունից և աչքերի խաղից ակնհայտորեն երևում էր նրանցից շատերի թերահավատությունը»[6]: Պարզապես ուզում էին հասկացնել, որ, միևնույն է, գործը գլուխ չի գա: Հակոբյանը նրանցից չէր նեղանում, անգամ գտնում էր, որ նման մոտեցումն իր հիմքերն ունի: Խնդիրն այն էր, որ խորհրդային գաղափարախոսության պայմաններում, ուռճացնելով մասսաների դերը, ստվերում էին թողել անհատին՝ խելացի, կարող, նախաձեռնող, ինքնատիպ, համարձակ, գործի գլուխ կանգնած մարդուն: Հասարակության հիշողության մեջ արմատացած էր այն պատկերացումը, որ խորհրդային կարգերի օրոք կուսշրջկոմը մի քանի անգամ որոշումներ էր ընդունել, քարտուղարները բանակցել էին ՀԿԿ կենտկոմի հետ, որպեսզի գոնե բուհի մասնաճյուղ բացեն, և՝ ապարդյուն: Տվյալ պարագայում Հրանտ Հակոբյանը մեն-մենակ, ունենալով ընդամենը մեկ աջակից, դստերը՝ Հրանուշ Հակոբյանին, ով այդ ժամանակ Գերագույն խորհրդի պատգամավոր էր, պետք է կատարեր այն հսկայական գործը, որը տարիներ շարունակ չէին կատարել հանրապետական ու տեղական կուսակցական ու պետական մարմիններն իրենց բազմամարդ ապարատով: Հակոբյանը նախաձեռնեց նախապատրաստական դասընթացներ, որտեղ այդ տարի ընդունվեց 119 դիմորդ: Երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող, մարդկանց հոգեբանությունը լավ ուսումնասիրած Հակոբյանը գիտեր՝ որքան էլ բարի ու օգտավետ գործ ձեռնարկես, այն չի կարող չունենալ եթե ոչ թշնամի, ապա անբարյացկամ, նախանձ ու չարամիտ հակառակորդներ: Ինչպիսի համբերություն, կամք էր պետք՝ դիմակայելու այդպիսի լարվածությանը, ասեկոսեներին, որի մասին գրում է. «... ամեն օր տարբեր տեղերից մարդկանց կողմից ծանոթ, թե անծանոթ, ինձ էին հասնում լուրեր, թե կառավարությունն ու նախարարությունը մերժել են Գավառում համալսարանի բացման խնդրանքը, որ ոչ մի դեպքում այն չի իրականացվի»[7]: Բարյացակամ տրամադրված, հոգով, սրտով Հակոբյանի կողքին կանգնած մի խումբ անձինք էլ ուրիշ մտավախություն ունեին, և այդ մասին նա ուղղակի նշում է, որ նրանց էլ «... ոչ թե այնքան ցավ է պատճառում համալսարանի չբացվելը, այլ իմ հեղինակությունը, որը կարող է խիստ կերպով

---

[6] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 45:

[7] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 49:

խախտվել հասարակության մեջ, և իրենք իրենց շատ վատ են զգալու»[8]: Գրեթե կես դար ստեղծել ամենակարող և վստահելի մարդու մասին հասարակական կարծիք և մեկեն կորցնել այն՝ մարդկային ապրումներից գուցե ամենացավալին է: Հոգեկան ինչպիսի ծանր ապրումներ է ունեցել՝ միայն իրեն է հայտնի: Ճարահատյալ տվել է հետևյալ պատասխանը. «....իրենց ամոթով չթողնելու համար խոստանում է այլևս Քյավառ չմտնել»: Կշեռքի մի կողմում անձնական բարձր հեղինակությունն էր, մյուս կողմում՝ ստանձնած գործի կարևորությունը, որին սրտատրոփ սպասում էր տարածաշրջանի ազգաբնակչությունը, դրա հետ կապված բարդությունը. ահա նման երկընտրանքի առաջ էր կանգնած Հրանտ Հակոբյանը: Ինքս, ականատեսը լինելով այդ ժամանակահատվածում նրա ապրումներին, պարզապես հետևեմ իր օրինակին և, ինչպես գրքում է նշված, «շրջանցենք 1993թ. փետրվարից մինչև մայիս ընկած ժամանակահատվածում ինձ համար շատ անհանգիստ վիճակը»[9]:

Երանի մեկ էլ կրկնվեր այդ ակնթարթը. 1993 թվականի մայիսի 5. ՀՀ կառավարության նախագահության նիստի 208 որոշմամբ հաստատվեց Կամոյում պետական համալսարան հիմնադրելու մասին որոշումը: Այդ օրվա մասին Հակոբյանը կգրի «վերջապես եկավ «վերջ տառապանքի» օրը»[10]: Կրկնակի երանի նրանց, ովքեր Հակոբյանին տեսել են այդ օրը՝ հաղթանակած մարդու կեցվածքով, հոգեպես թեթևացած ու հանգիստ: Ինձ անձամբ թվում էր, որ նա երիտասարդացել էր ավելի քան տասը տարով: Գավառում ուղղակի ցնծություն էր, որն էլ հենց կանվանենք «օր բերկրանքի»: Նպատակահարմար ենք համարում աղերսներ տեսնել մեր այդ օրերի և Ստեֆան Ցվայգի «Մարդկության աստեղային ժամերը» գրքի հետևյալ պարբերության մեջ. «Այդպիսի դրամատիկական լարումներ, այդպիսի նշանավոր ակնթարթներ, երբ դեպքերի այն շրջադարձը, որից կախված է ոչ միայն ներկան, այլև՝ ապագան, ի կատար է ածվում մեկ օրում, մեկ ժամում կամ նույնիսկ մեկ րոպեում, հազվագյուտ են մարդու կյանքում և հազվագյուտ են պատմության ընթացքում»[11]: Ինչպիսի ոգեշնչում և դրականորեն ինչպիսի լիցքավորված կենսադաշտ, միմյանց ցնծագին լուրը հաղորդելով՝ ստեղծվել

---

[8] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 51:
[9] Նույն տեղում, էջ 54:
[10] Նույն տեղում, էջ 55:
[11] Ցվայգ Ստ., Մարդկության աստեղային ժամերը, Երևան, 1986, էջ 5:

էր հույսի ու հավատի մի ողջ միջավայր, և դարձյալ դիմենք Ցվայգին. «Ես այդ ժամերն աստեղային եմ կոչել այն պատճառով, որ դրանք, հավերժական աստղերի նման, մշտապես շողում են մոռացության ու անէացման գիշերներում»[12]: Այո՛, դա վերջին հարյուր տարում՝ Գավառի սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցումից հետո, մեր տարածաշրջանի աստեղային ժամն էր: Այն անհրաժեշտ է մշտապես հիշել, և հակացուցված է շտկումներ կատարել, քանի որ պատմությունը բարդ է արարելու պահին, դաժան՝ արարվածը չարժևորելու պարագայում: Ցավոք, ոգևորությունը տևեց ընդամենը երկու օր... Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ սկսվել է տառապանքի մի նոր շրջան: Իր իսկ արտահայտությամբ՝ գտնվեցին մարդիկ, որ կառավարության թիվ 208 որոշումից հետո էլ դատողություններ էին անում, որ, միևնույն է, գործը գլուխ չի գա: Բազմաթիվ փորձությունների միջով անցած, համբերությամբ շատ բան հաղթահարած անձը նախօրոք պատրաստ էր երկրորդ ալիքին դիմակայելու, քանզի ոչ միայն տեսականորեն գիտեր՝ «ինչպես շատ նշանավոր, այնպես էլ փոքր ու աննշան իրադարձություններից քչերն են, որ իրականացվում են անխաթար ու անաղմուկ»[13]: Ցավոք, համալսարանի բացման պարագայում այդ սկզբունքը ևս գործեց, և տեղի ունեցան աղմկահարույց դեպքեր՝ կապված Գերագույն խորհրդում գիտության և կրթության հանձնաժողովի նախագահի և տեղակալի կողմից նախարար Վարդգես Գնունուն ուղղված մեղադրական ելույթների հետ, որ նա, անտեսելով հանձնաժողովին՝ հարցը ներկայացրել է կառավարությանը: Նիստը հեռարձակվում էր, բոլորս էլ ունեինք շատ ծանր ապրումներ, իսկ Հակոբյանն այդ օրվա մասին գրում է. «...ցասումնալից ելույթներ ունեցան համալսարանի բացման նախաձեռնողների դեմ, քիչ էր մնում բոլորին հռչակեին պետական հանցագործներ»[14]: Ծանր ու մղձավանջային օր, և կրկին ասեկոսեների շարան: Այդ լարված օրերին Հրանուշ Հակոբյանը գտնվում էր արտերկրում: Պարոն Հակոբյանը համոզված էր, որ եթե այդ պահին նա խորհրդարանում լիներ, իրադրությունն այլ կլիներ: Ելույթ ունեցողներին ճանաչում էր, շատերը իրեն հարազատ մարդիկ էին, ուրեմն այստեղ մի գաղտնիք կար, որին հանգեց ելույթների բովանդակությունը վերլուծելով. այն ուղղված էր նախարարի դեմ: Խնդիրն այն էր, որ մասնավոր բուհերի ռեկ-

[12] Ցվայգ Ստ., Մարդկության աստեղային ժամերը, Երևան, 1986, էջ 5:
[13] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 57:
[14] Նույն տեղում, էջ 59:

տորները, շրջանցելով այդ դժվարին և երկարատև ճանապարհը, հիմնել էին բուհեր այն ակնկալիքով, որ հետագայում նրանց կտրվի պետական կարգավիճակ: Նախարարը դեմ էր այդ գաղափարին և չէր ընդառաջել նրանց, ուստի ճիշտ ժամանակն էր պահանջել նրանից «... պետական դարձնել բոլոր կոոպերատիվ բուհերը, ապա նոր մտածել Կամոյում պետական համալսարան բացելու մասին»[15]: Հակոբյանը կանխազգում էր, որ մի քանի օր հետո գումարվելիք հաջորդ նիստին խոսակցությունները շարունակվելու են, ուստի բորբոքված կրքերը հանգստացնելու ուղիներ էր փնտրում: Եթե Հրանտ Հակոբյանն է գրում, որ «Հուսախաբությունն ու հիասթափությունը խեղդում էին ինձ, ...ինչպես ժողովուրդն է ճիշտ նկատել, մնում էի Աստծո հույսին», ուրեմն կարելի է պատկերացնել դեպքերի խիստ անցանկալի ընթացքը: Բարեբախտաբար այդ չարաբաստիկ նիստի հաջորդ օրը Ծովազարդ գյուղի բարձունքում տեղի էր ունենալու «Խաչ և սուր» հուշահամալիրի բացումը, որը հեռարձակվում էր հանրապետության պետական հեռուստատեսության առաջին ալիքով: Բացմանը հրավիրված էին հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, գրեթե բոլոր պատգամավորները, կրթության և մշակույթի նշանավոր գործիչներ: Եվ Հրանտ Հակոբյանը արեց այն, ինչը նախօրոք չէր էլ ենթադրվում: Մեկ առ մեկ հանդիպեց գրեթե բոլորին՝ կոտրելով կարծրատիպը պետական և կոոպերատիվ բուհերի փոխհարաբերության և Կամոյում պետական համալսարան բացելու անհնարինության վերաբերյալ: Օրվա վերջում չափազանց հոգնած, բայց բարձր տրամադրությամբ նշեց, որ բոլորն էլ խոստացել են օգնել, եթե ոչ՝ չխանգարել: Արտասահմանից վերադարձած Հրանուշ Հակոբյանն էլ հանդես եկավ 7 կետից բաղկացած համոզիչ և հիմնավոր հայտարարությամբ, որի 7-րդ կետում շարադրված է. «Ինչու՞ պետական: Քանի որ մասնավոր բուհերը դեռևս չեն ապացուցել իրենց մրցունակությունը, և չկա ժողովրդի լիարժեք վստահությունն այս համակարգի նկատմամբ...»[16]: Փիլիսոփայության, պատմության, կրոնի և գրականության խորը գիտակ Հակոբյանը անհրաժեշտության և պատահականության եզրույթների արանքում միշտ զգում էր Աստծո շունչը, որ առանց հավատի, դրա ամենալայն իմաստով, ոչնչի հասնել հնարավոր չէ: Հետևենք նրա դատողությունների ընթացքին. «...վրա հասավ ամենա-

[15] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 59:
[16] Նույն տեղում, էջ 62:

կալ, ամենակարող Աստծո օգնությունը...»[17]: Վերցնելով Կամոյում ինքնաֆինանսավորման սկզբունքով պետական համալսարան հիմնելու մասին կառավարության որոշումը և համալսարանում ընդունելություն կազմակերպելու մասին նախարարի հրամանը՝ Հակոբյանը հաղթանակողի բերկրանքով հասավ Գավառ և հանձնարարեց ինձ անմիջապես նախապատրաստել ընդունելության վերաբերյալ հայտարարություն: Եվ ինչպես Հակոբյանն է գրում, այդ մասին տեղեկանալուն պես լսվեցին «բարձր ճիչեր»[18]: Հենց դա էլ կհամարեի «ճիչ բերկրանքի», որի ելևէջները մինչև այժմ ականջումս են: Այդ ճիչն հավաստումն էր այն բանի, որ նրան անվանում էին «Արքա», և այդ արտահայտությունը լսելիս՝ դեմքին հայտնվում էր մեղմ ու գեղեցիկ ժպիտ: Դրա համար բավարար հիմքեր կային, նախ իր մասնագիտության հարգը՝ փիլիսոփայությունը՝ որպես գիտությունների գիտություն, և այն, որ արքաները կայսրություններ են ստեղծել մարդկանց կյանքի գնով, հրով ու սրով, իսկ ինքը ստեղծեց մի ողջ կրթագիտական, մշակութային տարածք՝ իր անուրանալի վաստակով, արդար ձեռքերով ու մաքուր խղճով:

Հետագա տարիներին տարածքը պահպանելու և ընդլայնելու հարցերում շատ գործ կար անելու: Հետևողական ու ջանադիր էր համալսարանին վերաբերող բոլոր հարցերում, անհանգիստ էր անգամ եղանակային պայմաններին համապատասխան. քամու ժամանակ փոթորկվում էր, անձրևին, ձմռան ցրտին ու բքին՝ մռայլվում, քանզի պիտի լուծեր հիմնական շենք ունենալու, ուսումնական գույք ձեռք բերելու, ավտոբուսի, հանրակացարանի, գրադարանի և բազմաթիվ այլ հարցեր: Մեր կարծիքով՝ Հրանտ Հակոբյանը հոգեպես խաղաղվեց միայն 2000 թվականի սկզբին, երբ Հրանուշ Հակոբյանի աջակցությամբ լուծեց ջեռուցման, տանիքի վերանորոգման, զինծառայությունից տարկետման իրավունքով տեղերի և բազում այլ հարցեր: Անսահման բերկրանք էր ապրում համալսարանի դասախոսների, իսկ հետո նաև գերազանցիկ շրջանավարտների կողմից գիտական կոչումներ ստանալու փաստերից: Երջանիկ անհատ էր նա, իրապես տառապանքի ճանապարհով բերկրանքի հասած և անչափ գոհ էր՝ էստաֆետը հուսալի ձեռքեր փոխանցելով: Սովորական մահկանացուների համար հենց սրանով էլ ամեն ինչ ավարտվում է, բայց արի ու տես, որ այդ ամենը երկրային կյան-

[17] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 62:
[18] Նույն տեղում, էջ 66:

քից տեղափոխեց երկնային կյանք կամ Աստծո արքայություն՝ տալով հետևյալ պարտավորեցնող և զգուշացնող պատվիրանը. «Խաղաղ կննջեմ, երբ ամեն ինչ լավ ընթանա, և գերեզմանում շուռ կգամ, եթե ինչ-որ բան ձախ ու ծուռ ընթանա»: Մեր ներկայիս և հաջորդ սերնդի պարտքն է աշակերտի խոնարհությամբ հավերժի ճամփորդ Հրանտ Խաչատուրի Հակոբյանի պատվիրանի անխաթար կատարումը:

GRATIFICATION THROUGH SUFFERING
(dedicated to the 95th birthday anniversary of Hrant Khachatur Hakobyan)

GHAJOYAN HAMLET
Candidate of Philosophy,
Dean of the Faculty of Humanities, GSU
e-mail: h.ghajoyan@gsu.am

The article is dedicated to Hrant Khachatur Hakobyan's initiative to create a university in Gavar, the description of the process, difficulties that encountered during its creation, the efforts to overcome them and emotional experiences.The article is based on the book "Pages from the History of the Foundation of Gavar State University" by Hrant Hakobyan, as well as the impressions and memories gained over the years of working with him.To found a university was a longtime dream, a misson and a life work for Hrant Hakobyan. In the early 1990s real opportunities were created for its implementation. Hakobyan created not a private but a state university. His daughter, Hranush Hakobyan, Deputy of the Supreme Council, then minister of Diaspora of RA supported him in this work. Due to strong will and determination, Hrant Hakobyan achieved his dream. The cost of strenuous activity and mental suffering was the unique and gratifying day- May 5, 1993, when the RA Government's decision on the establishment of the university was made. It was Hrant Khachatur Hakobyan's finest hour.

Keywords: *Hrant Hakobyan, university, strenuous activity, mental suffering, gratification, personal and public interests, memory, public opinion.*

ЧЕРЕЗ СТРАДАНИЯ К ТРИУМФУ
(посвящается 95-летию Акобяна Гранта Хачатуровича)

КАДЖОЯН ГАМЛЕТ
Кандидат философских наук,
Декан факультета гуманитарных наук
Гаварского государственного университета
электронная почта: h.ghajoyan@gsu.am

Статья посвящена процессу основания Гаварского государственного университета, изучению роли Акобяна Гранта Хачатуровича в формировании и становлении государственного вуза в Гаваре, описанию возникших при его создании трудностей, усилий по их преодолению, душевных переживаний ректора-основателя.

В основу статьи положена книга Акобяна Гранта «Страницы из истории основания Гаварского государственного университета», а также впечатления и воспоминания, полученные за годы работы с ним.

Создание университета было давней мечтой, миссией и делом всей жизни профессора Гранта Акобяна.

В начале 1990-х годов были созданы реальные возможности для его осуществления. Грант Акобян создал не частный, а государственный вуз. В этом деле его поддержала дочь, депутат Верховного Совета, после министр диаспоры РА Грануш Акобян. Благодаря твердой воле и решительности Грант Акобян добился своей мечты. Ценой напряжённой деятельности и душевных переживаний настал отрадный и неповторимый день - 5 мая 1993 года, когда было принято решение Правительства РА об учреждении государственного университета на родине Гранта Акобяна.

Это был звездный час Гранта Хачатуровича Акобяна.

Ключевые слова: *Грант Акобян, университет, напряжённая деятельность, душевные переживания, радость, личные и общественные интересы, память, общественное мнение.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.05.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 19.05.2022թ.: